Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

377
ट-97

22835

1859

2

6-97

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Շուշուայ Հոգևոր Դպրոցի հաստատուած Մատթէոս Կաթողիկոսի ամենայն Հայոց Հայրապետական Շուշուայ Հայոց Հասարակութեան անունով տուած կոնդակով դեկտեմբերի 4-ին 1859 թուին ի Սուրբ Էջմիածին համար 284։

(Մասն Ա.)

Կառավարչական մասն

ԳԼՈՒԽ Ա.

Նպատակ և Կառավարութիւն Դպրոցի.

Յօդ. 1.) Շուշուայ Հոգևոր Դպրոցի նպատակն է պատրաստել դիւաւորապէս Հայաստանեայց եկեղեցւոյ համար արժանաւոր պաշտօնեաներ. և առ հասարակ Հայոց հասարակութեան համար լուսաւորեալ և ուսեալ անդամներ։

Յօդ. 2.) Տէր Դպրոցին է ինքն Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց և Ծայրագոյն Հոգևոր Աստեանն Սինոդի Սրբոյ Էջմիածնի։

Յօդ. 3.) Դպրոցի Կառավարութիւնը յանձնուած է Դպրոցի Կառավարութեան ժողովին, որն որ կազմուած է 5 Հոգաբարձուներից Դպրոցի տեսչից ընդ Նախագահութեամբ Ղարաբաղու Վիճակաւոր Եպիսկոպոսի. Դպրոցի կառավարութեան խորհուրդը ունի Աստենագրիր և գրագիր։

Յօդ. 4.) Բացի 5 Հոգաբարձուներից կան և 5 նրանց փոխանորդ, որոնք տեղափոխում են Հոգաբարձուներին սրանց բացակայութեան ժամանակը։

Յօդ. 5) Հոգաբարձուներին և նրանց փոխանորդներին ընտրում է Շուշուայ Հայ հասարակութիւնը իւր միջից կամ Ղարաբաղու Վիճակի ուրիշ քաղաքներու Հայ հասարակութեան անդամներից հաստատութեամբ Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց։

Ծանօթութիւն. ա.) Հոգաբարձուների և նրանց փոխանորդների ընտրողութիւնը լինում է հետևեալ ձևով։ Վեհափառ Կաթողիկոսը կոնդակ է ուղարկում Շուշուայ Հայ հասարակութիւնը հոգաբարձուների, նրանց փոխանորդների ընտրութեան մասին. կոնդակը ստանալուն պէս Վիճակաւոր Եպիսկոպոսը կարգադրութիւն է տեսնում, որ կոնդակը Շուշուայ եկեղեցիներում կարդուի, միևնոյն ժամանակ ծանուցումն է անել տալիս, որ նշանակուած օրը և ժամը հասարակութիւնը ժողովուի առաջնորդարանը նշանակած ժամին, ժողովուրդը ժողովում է առաջնորդարանը և անում է ընտրութիւնը, և ընտրած հոգաբարձուներին և նրանց փոխանորդներին Վիճակաւոր Եպիսկոպոսը առաջնորդում է Վեհափառ Կաթողիկոսին հաստատութեան համար։ բ.) Ընտրողութեան ժամանակն հոգաբարձութիւնը պարտաւոր է յառաջագոյն ծանուցանել Նուխու հասարակութեան, որ նա իւր միջից ցոյց տայ հոգաբարձութեան արժանաւոր անձն մի փոխանորդովն։ Իսկ երկրորդ փոխանորդն ընտրուի Շուշուայ հասարակութիւնից։ գ.) Հոգաբարձուք և նրանց փոխանորդները ընտրւում են ձայնից բազմութեան քուէով։

Յօդ. 6.) Դպրոցի Տեսչին ընտրում են Դպրոցի հոգաբարձուները Վիճակաւոր Եպիսկոպոսի նախագահութեամբ յայտնելով սրա մասին Էջմիածնի Սինոդին։

Յօդ. 7.) Հոգաբարձուները և նրանց փոխանորդները ընտրւում են 3 տարով, 3 տարուց յետոյ լինում է նոր ընտրութիւն։

Յօդ. 8.) Դպրոցի կառավարութեան խորհուրդը ունի շաբթէնը մէկ անգամ ժողով։

Յօդ. 9.) Ամեն ժողովի մէջ հոգաբարձուներից երկուսը անպատճառ պիտի լինեն, այնպէս որ ժողովը 3 անդամից պակաս գոյանալ չէ կարող, թէև միացեալ երկու հոգաբարձուներն էլ ստիպուած լինեն իրենց սեպհական գործերի մասին բացակայել նրանց տեղը բռնում են ներկայ գտնուող փոխանորդները։

Տեսչի բացակայութեան ժամանակը բռնում է նրա տեղը նրա օգնականը (տես մաս ա. գ. 4.յ.)

Յօդ. 10.) Ամեն առաջարկութիւն և միտք վճռւում է ձայների բազմութեամբ. բայց հաւասարաձայնութեան ժամանակը ծանրակշիռ է այն կողմը, որ կողմը որ է նախագահը։

Յօդ. 11.) Ժողովի մէջ քննում են Դպրոցի վերաբերեալ ամենայն գործերը։

Յօդ. 12.) Ժողովի ամեն վճիռների և կարգադրութիւնների համար լինում են օրագիրներ (ժուրնալ)

Յօդ. 13.) Խորհրդի վճիռը ի կատարածին ըստ տնտեսական մասին հոգաբարձուները, իսկ ըստ ուսումնական մասին Դպրոցի Տեսուչը։

Յօդ. 14.) Հոգաբարձուների պարտաւորութիւն է կառավարել Դպրոցի արդիւնքները և նրա ամեն տնտեսական մասն, հոգալ Դպրոցի բարեկարգութեան և որդեգիրների և ամեն աշակերտների բարօրութեան համար թէ հագուստի, թէ կերակրի, թէ բնակութեան մասին. և ջանալ Դպրոցի արդիւնքները աւելացնել։

Եռաշ, 1894

377
6-97
2010
26433-ՀՀ.
4524-50

Յօդ. 15.) Դպրոցի կառավարութեան խորհուրդը յանձնւում է հոգաբարձուներից մէկին Դպրոցի դանձը. և պահել Դպրոցի եկքի և մուտքի ժապաւինեալ մատեանը, որն որ հոգաբարձութեան խորհուրդը ստանում է Էջմիածնի Սինոդից:

Յօդ. 16.) Եթէ դանձապետ հոգաբարձուին հարկաւոր լինի Շուշի քաղաքից երկար ժամանակով բացակայ լինել. նա պէտք է Դպրոցի կառավարութեան խորհրդի կարգադրութիւնով իւր պաշտօնը, դանձը և ժապաւինեալ մատեանները յանձնէ ճշտութեամբ ներկայ գտնուող հոգաբարձուներից մէկին կամ փոխանորդին, թէ հոգաբարձուները արդէն կունենան Դպրոցի կառավարութեան ուրիշ յանձնարարութիւն. մնացեալ հոգաբարձուքն էլ պարտին իրանց բացակայելու ժամանակը ծանուցանել Դպրոցի կառավարութեանը:

Յօդ. 17) Ամեն ամսուան առաջին օրումը Դպրոցի կառավարութեան խորհուրդը Դպրոցի դանձին և հաշուեմատեաններին վերահասութիւն է անում:

Յօդ. 18.) Բացի շաբաթուան կանոնաւոր ժողովները կարող են լինել և առանձին ժողովներ, որոնք առաջարկուին կամ նահանգից կամ անդամներից մէկին, թէ ժողով առաջարկողը հարկաւորութիւն է տեսնում առանձին ժողովի. և թէ գործը չէ ներում, որ ձգուի մինչև ապագայ կանոնաւոր ժողովը:

Յօդ. 19.) Ամեն տարուայ վերջին Դպրոցի կառավարութեան խորհուրդը կազմում է տարեկան հաշիւ Դպրոցի. թէ անտեսական և թէ ուսումնական մասին. և այն հաշիւն ուղարկուի Կաթողիկոսին, հաղորդելով միևնոյն ժամանակը Դպրոցի եկքի և մուտքի բուն ժապաւինեալ մատեանների հետ միասին տարեկան հաշուի օրինակը Էջմիածնայ Սինոդին. և հաշուի մէկ օրինակն էլ Ղարաբաղու Կոնսիստորիային:

Յօդ. 20.) Դպրոցի կառավարութեան խորհուրդը շինում ամեն տարուայ համար առաջուց դպրոցի ծախսի նախագաղափարը (սմետայ), որն որ հաստատում է Սինոդը և այդ նախագաղափարով է անում ծախսը. իսկ շատից դուրս անակնկալ կարևոր ծախսի համար իրաւունք է տալում խորհրդին տարեկան մինչև 500 մանէթ:

Յօդ. 21.) Դպրոցի կառավարութեան խորհուրդը ունի և իւր սեպհական կնիք Կաթողիկոսից հաստատուած:

Յօդ. 22.) Դպրոցի արդիւնքները են:

Ա. Մշնջենաւոր.

Վեհափառ Կաթողիկոսից հաստատուած 1869 թուին Յունիսի համար 321. Շուշուայ հայ հասարակութեան անունով և համար 322 Դպրոցի հոգաբարձուների անունով տուած Հայրապետական Կոնդակներով այն է:

ա. Տարեկան արդիւնք կրպակին մոմավաճառութեան:

բ. Նուէրք ծնողաց աշակերտաց:

գ. Նուէրք անձանց ստացողաց զծննդական վկայագիրս:

դ. Նուէրք անձանց ստացողաց զվկայագիրս արձակման ի հոգևոր կոչմանէ:

ե. Տուգանագրամք պահանջելիք ի յանցաւոր հոգևորականաց:

զ. Բոլոր արդիւնք ուխտատեղեաց մատրանց, մասանց և այլոց:

է. Գանձանակագրամք ժողովուրդք յամենայն եկեղեցիս թեմին:

ը. Նուէրք վանօրէից ի մնացորդ գումարաց արդեանց նոցին ընդ յօդ. 115 կարգադրութեան վանն գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ:

թ. Կամաւոր նուէրք ի պսակատեալց հայոց անկախ ի վիճակապատկան սոյն տեսակ արդիւնքից:

ժ. Սրբագրամ արդիւնք ի քահանայից ամի ամի ժողովելիք մի մի ռուբլի արծաթի:

ժա. Սրբագրամ արդիւնք ամի ամի ստանալիք ի հայոց ժողովրդականաց իւրաքանչիւր դերդաստանէ 20 կոպ. արծաթի:

ժբ. Կամաւոր նուէրք դպրոցին:

Յօդ. 23.) Շուշուայ հասարակութիւնից ընծայաբեր անձինք կարող են ամեն տարի յունուարի ամսոյ սկզբումը վերահասողութիւն գործել բոլոր հաշիւներին հոգաբարձուաց, որոնք պարտին արդար խղճմտանօք գործ դնել միմիայն յօգուտ Շուշուայ Դպրոցին, ինչպէս Հայրապետական կոնդակներով հաստատուած արդիւնքները, նոյնպէս այլ ընծայաբերութիւնները ժողովրդականաց, կատարելով ճշտիւ և ճշմարտութեամբ նուիրողաց կողմանէ առաջարկած պայմանները:

Յօդ. 24.) Հոգաբարձուներն ունին իրաւունք ուսումնարանի գումարն իրենց պատասխանատուութեամբ տալ շահօք հաւատարի անձանց և կամ մի քանի ժողովրդականաց համաձայնութեամբը դնել այնպիսի կալուածք, որոյ տարեկան արդիւնքը բաղկացնի գոնէ հարիւրին վեց տոկոսիք, և այս տոկոսիքն ծախս առնել յօգուտ Դպրոցին:

ԳԼՈՒԽ Բ.

Շուշուայ Հոգևոր Դպրոցի կազմուածք.

Յօդ. 1.) Շուշուայ հոգևոր Դպրոցը բաժանւում է 3 մասը. ա.) Նախապատրաստական մասն բ.) Իսկ դպրոցը. գ.) Յատկապէս հոգևորական մասն:

Յօդ. 2.) Դպրոցի նախապատրաստական մասն կազմում են Շուշուայ քաղաքի և առ հասարակ ամբողջ Ղարաբաղու վիճակի մասնաւոր (ծխական) ուսումնարաններն, որոնք եկեղեցիների մօտ բաց արած կը լինեն:

Յօդ: 3.) Ամեն մասնաւոր ուսումնարան այն եկեղեցւոյ, որի բակումն բաց արած կը լինի՝ քահանայի անմիջապէս տեսչութեան տակն է, և ունի բացի քահանայից՝ տեսուչ և մէկ կամ երկու ուսուցիչ:

Յօդ. 4.) Գլխաւոր Տեսչութիւն ուսումնական մասի կողմանէ ամէն մասնաւոր ուսումնարանների վրայ ունի Շուշուայ հոգևոր Դպրոցի տեսուչը: Իսկ ընդհանուր հովանաւորութիւն ամենի վրայ ունի դպրոցի կառավարութեան խորհուրդը:

Յօդ. 5.) Ուսումն մասնաւոր ուսումնարաններում, որն երկու դասատնից պէտք է կազմուած լինի՝ այնքան պէտք է լինեն, ինչքան պահանջում է հոգևոր դպրոցի առաջի դասատունը մտնելու համար. բայց տեղական հանգամանքներին նայելով, ուսումը կարող է պակաս և աւելի լինի, այնպէս որ մասնաւոր ուսումնարանն կարող է ունենալ երրորդ և չորրորդ դասատուններ, որտեղ որ ուսումը հաւասար լինի դպրոցի առաջին և երկրորդ դասատան ուսման:

Յօդ. 6.) Թէ ուսումնական. թէ տնտեսական մասին մասնաւոր ուսումնարանների տնօրէնութիւնը և կարգադրութիւնը յանձնւում է Շուշուայ հոգևոր դպրոցի կառավարութեան խորհուրդին:

Բ. Իսկ Դպրոցը.

Յօդ. 7.) Շուշուայ հոգևոր դպրոցը կազմուած է 6 դասատանից, որոնց մէջը դաս են տալում հետևեալ գրագրութիւնները և լեզուները:

1.) Առաջին դասատան մէջ, Սրբազան պատմութիւն, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Հայոց և Ռուսի լեզուներ, վայելչագրութիւն և եկեղեցական երգեցողութիւն:

2.) Երկրորդ դասատան մէջ Սրբազան պատմութիւն, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Հայոց , Ռուսի և Թուրքի լեզուներ, Վայելչագրութիւն, Նկարչութիւն և եկեղեց. երգեց.

3) Երրորդ դասատան մէջ Քրիստոնէական վարդապետութիւն, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, ընդհանուր և Հայոց պատմութիւն. Հայոց, Ռուսի, Թուրքի և Ֆրանսերէն լեզուներ, Վայելչագրութիւն, Նկարչութիւն և եկեղեցական երգեցողութիւն:

4.) Չորրորդ դասատան մէջ Քրիստոնէական վարդապետութիւն, Աշխարհագրութիւն, Այգեպրա և Երկրաչափութիւն, ընդհանուր և Հայոց պատմութիւն. Հայոց, Ռուսի, Թուրքի և Ֆրանսերէն և Լատիներէն լեզուներ. Նկարչութիւն և եկեղեցական երգեցողութիւն:

5.) Հինգերորդ դասատան մէջ Եկեղեցական պատմութիւն, Այգեպրա, և Երկրաչափութիւն, Աշխարհագրութիւն ընդհանուր Հայոց պատմութիւն, բնական գիտութիւն. Հայոց, Ռուսի, Ֆրանսերէն լեզուներ, Նկարչութիւն և եկեղեցական երգեցողութիւն:

6.) Վեցերորդ դասատան մէջ Աստուածաբանութիւն, Եռանկիւնաչափութիւն, Աշխարհագրութիւն, Ընդհանուր Հայոց պատմութիւն և բնական պատմութիւն, Հայոց, Ռուսի, Ֆրանսերէն լեզուներ. Նկարչութիւն և եկեղեցական երգեցողութիւն:

7.) Ուսումնական ժողովը ունի իրաւունք համաձայն ժամանակի հանգամանքներուն աւելացնել կամ փոփոխել ուսանելի առարկաները:

8.) Ամենայն դասատուութիւն պիտի լինի հայոց լեզուով հանդերձ թարգմանութեամբ:

9.) Ա. Բ. Գ. դասատուները անուանւում են ստորին: Իսկ Դ. Ե. և Զ. դասատուները վերին:

10.) Օրուան մէջ լինում է 4 դաս, իսկ վերին դասատուների մէջ ուսման առարկաների շատութիւնից կարող են լինել մէկ քանի օրուան մէջ և հինգ դաս:

Յօդ. 11.) Ամենայն դասը տևում է մէկ ու կէս ժամ և դասատուութիւնը սկսում է Մայիսի մէկից մինչև հոկտեմբերի մէկն առաւօտեան ութ ժամին, և տևում է մինչև տասն և մէկ ժամը. կէսօրից յետոյ երեք ժամից մինչև վեց ժամը. իսկ հոկտեմբերի մէկից մինչ մայիսի մէկն առաւօտեան ինն ժամից մինչև տասն երկու ժամը, և կէսօրից յետոյ երկու ժամից մինչև հինգ ժամը:

Յօդ. 12.) Շաբաթնակութիւն ուսումնական ժամանակի Դպրոցումը սկսում է օգոստոսի տասն և հինգից և տևում է մինչև ցյուլիսի մէկն:

Գ. Յատկապէս հոգևորական.

Յօդ. 13) Այս երրորդ մասն մէկ առանձին ուսումնարան չէ, այլ սրան կազմում են դպրոցի այն աշակերտները, որոնք որ դպրոցի մէջ իրենց ուսումը աւարտելուց յետոյ կը յայտնեն յօժարութիւն հոգևորական կոչումն ստանալու. (սրա վրայ տես մանրամասնաբար այս կանոնադրութեան Ա. մասն Գլուխ Ե):

ԳԼՈՒԽ Գ.

Դպրոցի Տեսչի պարտաւորութիւնները.

Յօդ. 1.) Տեսչին յանձնւում է դպրոցի ուսումնական կառավարութիւնը:

Յօդ. 2.) Տեսուչը ունի իրեն օգնական, որին ընտրում է ինքն, հաստատում է դպրոցի կառավարութեան խորհուրդը յայտնելով սրա մասին Էջմիածնայ Սինոդին:

Յօդ. 3.) Տեսչի օգնականը կատարում է տեսչից յանձնուած ամեն յանձնարարութիւններ դպրոցի ուսման վերաբերեալ:

Յօդ. 4.) Տեսչի բացակայութեան ժամանակ նրա տեղը բռնում է նրա օրինակը:

Յօդ. 5.) Տեսչի պարտաւորութիւն է գլխաւորապէս կառավարել դպրոցի ուսումնական մասն, բայց յայտնմանէ, թէ Նուշուայ քաղաքի, թէ հասարակ վիճակի մասնաւոր ուսումնարանների վրայ ըստ կարիլոյն աչք ունենալ: Իսկ տեսչի օգնականը պարտաւոր է գլխաւորապէս պարապուել Նուշի քաղաքի մասնաւոր ծխական ուսումնարաններով և ըստ ներման ժամանակի և այցելութիւն անել գիւղական ուսումնարաններին: Իսկ տեսչի բացակայութեան կամ հիւանդութեան ժամանակ կառավարել դպրոցի ուսումնական մասն:

Յօդ. 6.) Տեսուչը ընտրում և կարգում է ուսուցիչներ և վերակացուներ, թէ դպրոցում և թէ մասնաւոր ուսումնարաններում, գիտութեամբ դպրոցի կառավարութեան ժողովին. նշանակում է ուսման համար հարկաւոր գրեանք և ամեն կարգադրութիւններ յառաջադրելով դպրոց կառավարութեան խորհրդին և հաստատութիւն ստանալով նրանից: Իսկ նշանակութեան օրէնս ուսուցչի պարտի լինել նախընթաց գիտութեամբ Սինոդի ի հոգևորականաց Հայոց:

Յօդ. 7.) Տեսուչը ունի իրաւունք փոխելու ուսուցիչներին և վերակացուներին դպրոցի կառավարութեան խորհրդի վճռամամբ և թէ նրանց արժանի համարի իրենց պաշտօնին:

Յօդ. 8.) Տեսուչը պիտի հոգայ որ այսպիսի կանոնագրութեան մէջ եղած ուսման կանոններն (պրոգրամայ) ճիշտ կատարուի:

Յօդ. 9.) Տեսուչը պարտաւոր է աչքի առաջ ունենալ թէ դպրոցի արտաքին, թէ աշակերտների բարեկարգութեան, թէ նրանց ուսման վարք ու բարքի վրայ:

Յոդ. 10.) Տեսուչը պէտք է կազմէ իր մօտ շաբթէնը մէկ անգամ կամ գոնեա ամսէնը երկու անգամ ուսումնական խորհուրդ դպրոցի, թէ Նուշուայ մասնաւոր ուսումնարանների ուսուցիչներից և թէ դպրոցի ուսուցիչներից և այս խորհուրդումը պէտք քննուին դասատուութեան աշակերտների ուսման վարք ու բարքի խնդիրները:

ԳԼՈՒԽ Դ.

Դպրոցի աշակերտների վրայ:

Յօդ. 1.) Նուշուայ հոգևոր դպրոցում ընդունում են Նուշի քաղաքի և նրա բոլոր գիւղակի լուսաւորչական հայ հասարակութեան ամեն դասակարգի որդիք:

Յօդ. 2) Հոգևոր դպրոցի աշակերտները երկու են բաժանւում: ա. Ներքին աշակերտներ, որոնք մնում են դպրոցի մէջ, որտեղ ստանում են հագուստ, կերակուր և ուսման յամար հարկաւոր ամեն պարագայք. սրանց մէկ մասն որդեգիրներ են, միւս մասն թոշակաւորները, որոնք հատուցանելով դպրոցի նշանակեալ գումարը պահւում են որդեգիրներին հետ հաստատ: բ. Երթուեկ աշակերտներ, որոնք դպրոցի մէջ միայն ուսում են առնում:

Յօդ. 3.) Ներքին թոշակաւոր աշակերտները հատուցանում են 120 մանէթ:

Յօդ. 4.) Երթեկ աշակերտները հատուցանում են տարեկան 6 մանէթ:

Ծանօթութիւն. Այն աշակերտները, որոնց ծնողաց ազքատ լինելը յայտնի է դպրոցի կառավարութեան խորհրդին. կամ անյայտ լինելու ժամանակ խորհուրդը կը տեղեկանայ ծնողաց անկարողութեան մասին. ազատւում են տարեկան ուսման վարձ վճարելից:

Յօդ. 5.) Որդեգիրների թիւը կը լինի առ ժամանակ տասն երկու. սրանց հաշւում պէտք է լինեն չորս ազքատ քահանայի որդիք և ութ հայ հասարակութեան այն անդամների որդիք, որոնք կարողութիւն չունին իրենց որդոց ուսում տալ, իսկ ժամանակով երբ դպրոցի արդիւնքները կը շատանան որդեգիրներիթիւ կաւելանայ. պարտ է լինել և միևնոյն յարաբերութիւնով և կարգաւ այսինքն՝ երեք մասից մէկը հոգևորականներից, իսկ երկուսն աշխարհականներից:

Յօդ. 6.) Եթէ դպրոցի որդեգիր դառնալու ցանկացողները աւելի լինեն, տեղ չը լինելու պատճառով ընդունւում են այն երախայն, որն աւելի գիտութիւն ունի և աւելի հասկացող՝ լաւ վարքի ու բարքի տէր երեխայ լինի:

Յօդ. 7.) Որդեգիրներից կամ առ հասարակ աշակերտներից նրանք, որոնք դասատան մէջ երկու տարուց աւելի մնան (թէ հիւանդութեան պատճառ չը լինի) կամ վատ վարք ունենան. արձակւում են դպրոցից, որով տեղ են բաց անում ուրիշ արի և ջանասէր երախաների համար:

Յօդ. 8.) Այն աշակերտը, որ իր ուսումը—դպրոցը լաւ կաւարտէ՝ ստանում է դպրոցի կառավարութեան խորհրդի ստորագրութիւնով և դպրոցի կնքով դրոշմած վկայագիրը ուսման-ատեստատ։

Յօդ. 9.) Այն աշակերտները, որոնք իրենց ուսումը չեն աւարտել դպրոցում և դուրս են գնում դպրոցից ստանում են վկայական դպրոցի տեսչի ստորագրութիւնով։

Յօդ. 10) Որդեգիր կամ թոշակաւոր աշակերտները պէտք է ունենան մկրտութեան և ծաղկի վկայագիր. իսկ երթևեկները միմեայն մկրտութեան վկայագիր (մեարիքական)

Յօդ. 11.) Նուշեի հոգևոր դպրոց մտնող աշակերտները յայտնում են դպրոցի կառավարութեան խորհուրդին, որն նրանց ուղարկում է տեսչի մօտ. տեսուչը ուսուցիչների հետ միասին քննութիւն է անում երախային և նրա գիտութեան յարմար դասատուն է մտցնում։

Յօդ. 12.) Դպրոցի առաջին դասատուն մտնելու համար պէտք է գիտենալ. նախ՝ հայերէն վարժ կարդալ և գրել. երկրորդ՝ Սրբազան պատմութիւնը կարճաբան. (Հայր մեր) և մէկ քանի գլխաւոր աղօթքներ. երրորդ՝ Թուաբանութիւնից առաջին չորս գործողութիւնը։ Առաջին դասատուն մտնողի տարիքն պէտք է լինի 10—ց12 տարեկան. իսկ բարձր դասատուն մտնողն 12, 14 և 15 տարեկանից ոչ աւելի։

Յօդ. 13.) Երկրորդ դասատուն մտնողն պիտի գիտենայ ամեն առարկաներ, որոնք դպրոցի առաջին դասատան մէջ ուսանում են. այնպէս էլ երրորդ՝ կամ հետևեալ դասատուն մտնողները պիտի ունենան նախընթաց դասատան գիտութիւնը։

Յօդ. 14.) Տարեկան ուսման վարձ դպրոցին պէտք է հասուցանի աշակերտներից տարէնը երկու անգամ այն է՝ ամեն փետրամեակի սկզբումը։

Յօդ. 15.) Որդեգիրները դպրոցում ուսումը աւարտելով և յայտնելով ցանկութիւնը հոգևորական կոչումը ընդունելու, հագնում են հոգևորականի հագուստ և մտնում են դպրոցի կառավարութեան խորհուրդի հովանաւորութեան ներքոյ, որն յետագայ գլխի զորութիւնով հոգս է քաշում նրանց ապագայի համար։

Յօդ. 16.) Ներքին թոշակները, թէ երթևեկ աշակերտները, որոնք դպրոցի մէջ վկայագրով ուսումը աւարտելուց յետոյ յայտնեն իրենց յօժարութիւնը հոգևորական կոչում ընդունելու, նմանապէս հագնում են հոգևորական հագուստ և որդեգիրների նման մտնում են դպրոցի կառավարութեան խորհրդի հովանաւորութեան ներքոյ։

Յօդ. 17.) Դպրոցի մէջ ուսում աւարտող աշակերտներից երկուսը լաւերը դպրոցի հաշուով ուղարկում են համալսարան, տարեկան 400 մանէթ ստանալով այն պայմանով, որ նրանք համալսարանը աւարտելուց յետոյ վեց տարի ծառայեն Նուշի քաղաքի հոգևոր դպրոցին. ստանալով իրենց պաշտօնին յարմար ռոճիկ։

ԳԼՈՒԽ Ե.

Հոգևորական կոչում ընդունած աշակերտների վրայ.

Յօդ. 1.) Դպրոցի աշակերտները, որոնք ուսումը դպրոցի մէջ աւարտած ընդունել են հոգևորական կոչում ստանում են զանազան հոգևոր աստիճաններ։

Յօդ. 2) Նորընծայ գիտուն դպիրներ դպրոցում ուսում աւարտելուց յետոյ, դուրս են գալիս դպրոցից և նշանակում են Ղարաբաղի առաջնորդից, երկու երեք կամ (աւելի նայելով) տարով Նուշի քաղաքի եկեղեցիներում սպասաւորութիւն անելու։

Յօդ. 3.) Դպրոցի կառավարութեան խորհուրդը պէտք է հոգայ որ նորընծայ գիտուն դպիրները դուրս գալուց յետոյ մինչև քահանայ ձեռնադրուելը ապահուած լինեն կեանքի ամենահարկաւոր պայմանների կողմանէ, այն է՝ բնակարանի հագուստի և կերակրի։ Նորընծայ գիտուն սարկաւագները, պէտք է ստանան բնակարան Առաջնորդարանումը. իսկ եթէ այնտեղ չը լինի ըստ բաւականի տեղ՝ դպրոցի կառավարութիւնը Նուշի քաղաքի մէջ բնակարաններ է վարձում երկու երեք դպիր միասին բնակուելու։ Նրանք, որոնք դպրոցի մէջ պաշտօն կունենան ուսուցչի կամ վերակացուի. կը մնան դպրոցում։

Իսկ հագուստ և կերակուր կստանան կամ դպրոցից, կամ դպրոցի կառավարութեան խորհուրդը տարեկան փոդ կը հատուցանէ ամեն մէկին, որով սրանք իրանք կերակրուին և իրանք կը հոգան իրենց հագուստի համար։

Յօդ. 4.) Նորընծայ գիտուն դպիրներ սպասաւորութիւն անելով եկեղեցւոյ մէջ ստանում են քահանայական արդիւնքից և հոգաբարձուից մասն իւրեանց կոչման յարմար։

Յօդ. 5.) Նորընծան գիտուն դպիրները ուսում աւարտելուց յետոյ մինչև քահանայ ձեռնադրուիլն մնալով Նուշի քաղաքի մէջ պէտք է իրենք կատարելագործուին հոգևոր գիտութեանց մէջ և գիտնական պարապմունքով զբաղուած լինեն։

Յօդ. 6.) Նորընծայ գիտուն դպիրների պարապմունքները պէտք է լինի ա. քարոզներ, որոնք թէ հասանական լինեն առաջնորդին, յարմար օրերին կարդուին եկեղեցիներում։ բ. Հայոց լեզուի, հայոց գրականութեան և հայոց պատմութեան պարապմունք։ գ. Աստուածաբանական պա-

բաղմունք և դ. ըստ կարգադրութեան դպրոցի կառավարութեան խորհրդի դասատուութիւն և վերակացութիւն անել թէ դպրոցում թէ Շուշի քաղաքի մասնաւոր (ծխական) ուսումնարաններում ռոճիկով։

Ծանօթութիւն. Այս վերջին (գ.) պարտաւորութիւն ունեցողները պարտական են կատարել և առաջին երեք (ա. բ. գ.) պարտաւորութիւնները։

Յօդ. 7.) Դպրոցի կառավարութեան խորհուրդը պիտի աչք ունենայ նորընծայ գիտուն սարկաւագներին վրայ, սրանք թէ եկեղեցւոյ սպասաւորութեան, թէ իրենց գիտական պարապմունքին պատկանեալ պարտաւորութիւնները ձիշտ կատարեն և պիտի հոգայ, որ սրանց ամեն կերպ հարկաւորութիւններին բաւականացնէ և օգնութիւն տայ պարապուելու։

Յօդ. 8.) Երբոր նորընծայ գիտուն սարկաւագները կը յայտնեն իրենց յօժարութիւնը քահանայ ձեռնադրուելու և վերոյգիալ ուսմանց մէջ կատարելագործուած կը լինեն, ստանում են աւագ սարկաւագութեան աստիճանը և ձեռնադրւում են քահանայ։

Յօդ. 9.) Բայց թէ նորընծայ գիտուն սարկաւագը դպրոցի կառավարութեան խորհրդից անարժան համարուի քահանայութեան համար կամ բոլորովին չէ ձեռնադրւում քահանայ կամ ժամանակ է տրւում նրան իր պակասութիւնները ուղղելու և արժանանալու քահանայական պաշտօն ստանալու։ 4.) Թէ չուզղուի այն ժամանակը կզրկուի բոլորովին դպրոցի կառավարութեան խորհրդի հոգատարութիւնից և քահանայական աստիճան ստանալուց։

ԳԼՈՒԽ Զ.

Յօդ. 1.) Տարուան վերջին, այն է՝ յունիսի վերջումը լինում են տարեկան քննութիւններ (էկզամին) և քննութիւնից յետոյ մինչև օգոստոսի 15-ն ուսումը դադարում է։

Ծանօթութիւն. Ամռական արձակուրսի ժամանակը դպրոցի որդեգիրները կարող են գնալ իրենց տուն կամ իրենց գիւղը։

Յօդ. 2.) Բացի ամառուան արձակուրդը լինում են և ձմեռուան և գարնան. այն է՝ դեկտեմբերի 28-ից մինչև յունուարի 9-ը և աւագ չորեքշաբթից մինչև զատկի ութօրեքը։

Ծանօթութիւն. Դպրոցի որդեգիրները կարող են և այս միջոցում արձակուրդ իրենց տունն։

Յօդ. 3.) Դպրոցն ազատ է դասատուութիւնից. բացի զլխաւոր Տէրունական և Հայոց եկեղեցական զլխաւոր տօներից։

Յօդ. 4.) Ամեն շաբաթ երեկոյեան և կիրակի օրերը դպրոցի աշակերտները գնում են եկեղեցի։

Յօդ. 5.) Քննութիւններից 2 օր յետոյ նշանակւում է հանդէս (ակտ), որտեղ հրաւիրւում է Շուշիի հայ հասարակութիւնը և այն հանդիսի մէջ յայտնում աշակերտների դասատուն փոխիլը, արժանաւոր աշակերտներին բաժանւում են պարգևներ, ընթեռնում են հանդիսին յարմար ճառեր և կարդւում հրապարակաւ դպրոցի տարեկան հաշիւը։

ԳԼՈՒԽ Է.

Յօդ. 1.) Դպրոցը ունի հիւանդանոց 10 մահճակալ, տարեկան բժիշկ և հիւանդանոցի վերատեսուչ. մէկ կին կամ աղամարդ և փոքրիկ դեղատուն։

Յօդ. 2.) Դպրոցը ունի գրատուն, որից գրեանք է տրւում ժամանով կարդալու թէ դպրոցի աշակերտներին և թէ նորընծայ գիտուն դպիրներին։

Յօդ. 3.) Դպրոցը ունի իւր գրավաճառանոցը, որտեղ վաճառւում են ուսման պատկանեալ գրեանք աժան գնով, որով միջոց է տրւում թէ դպրոցի թէ մասնաւոր ուսումնարանների աշակերտներին հեշտութեամբ ի ձեռս բերել իրենց ուսման համար հարկաւոր գրեանքը։

Յօդ. 4.) Թէ գրատունը թէ գրավաճառանոցը պիտի յանձնուած լինի առանձին մարդու կամ վերակացուներից մէկին։

Յօդ. 5.) Դպրոցը ունի հանդերձատուն և հանդերձապահ։

ԳԼՈՒԽ Ը.

Յօդ. 1.) Եթէ ժամանակ ով հարկաւորուի նոր յօդուած աւելացնել կամ փոփոխել այս կանոնագրութեան մէջ՝ հոգաբարձութիւնը կարող է խնդրել դրա համար լուծումն Էջմիածնայ Սինոդից։

Յօդ. 2.) Այս կարգադրութիւնը պարտի շարունակել ժամանակաւորապէս փորձառութեան կերպով, յետ որոյ համեմատ ուսումնարանի միջոցներին և ժամանակին անել նոր առաջարկութիւն։

Համար 772

Այս կանոնադրութիւն ընթերցեալ յատենի գաւառական, ուստի Սինոդն Սրբոյ Էջմիածնի ստորագրութեամբ Անդամոց և դրոշմամբ տպարանի հնգոյ վաւերացուցանէ՝ ի 12 ապրելի յամի Քրիստական 1861. ի Սուրբ Էջմիածին ի վերայ իսկականին ստորագրեալ են։



Անդամք Սինոդի. Ղուկաս Արք-Եպիսկոպոս։
Մակար Արք-Եպիսկոպոս.
Եղիազար Եպիսկոպոս Տէր-Կարապետեան.
Գրիգոր Եպիսկոպոս Յովհաննց։
Սարգիս վարդապետ Տէր-Գասպարեան. և վաւերացուցեալ է
Ադենադիր Ս. Թադիանոսեանց։

Печатать разрѣшаю 16 Февраля 1894 года Шушинскій Уѣздный Начальникъ Капитанъ Барановскій

Типо-скоропечатная Шушинскаго Армянскаго Духовнаго Вѣдомства

317
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Гос. Библиотека
ZUUΠ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ц. Ереван

22835

2673